# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Սեպտեմբերի 3-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Վերափոխման:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Սեպտեմբերի 8-ին, ուրբաթ. - Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Սեպտեմբերի 10-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Վերափոխման:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Սեպտեմբերի 17-ին, կիրակի. - ԽԱՉՎԵՐԱՑ:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Փայտ կենաց, որ փոխանակ մահացու պտղոյն զՔրիստոս պտղաբերեցեր» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 35):

**Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի. - Տօն է Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տրդատ քահանա Բոզիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Սեպտեմբերի 24-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ս. Խաչին:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 37):